կաթողիկոսի մահուան լուրն և հանդուցեալին յաջորդելու կոչուած երկու կանդիտատի ընտրութիւնը նրան յայտնելով, խնդրեց, «եթէ հարկաւոր համարէ՝ հասցնել այդ ի գիտութիւն առ որ անկն է»։ Ըստ այսմ նոյն թուականի մարտի 16 Բարձրագոյն հրովարտակ եկաւ յանուն Օսմանեան դրան ուսուցց դեսպան Թամարայի՝ հետեւեալ բովանդակութեամբ. «Զանացէք հայոց ազգի կաթողիկոսի ընտրութեան առթիւ աշխատել, որ Դուռը ներկայ դէպքում նոյն ազգին տրուած իրաւունքը չեղծանէ, և փոյթ տարէք, որպէս զի այդ կոչման համար մի անարժան մարդ չընտրուի, որ արծաթով և հնարքներով կարողանար ձեռք բերել միմիայն հայոց ազգի ընդհանուր հաւանութեամբ ձեռք բերելի կոչումը»։ Նոյն թուականի ապրիլի 16 դեսպանը գրում էր Լաչկարեին, թէ չնայելով հասարակ ժողովրդի համակրութեան Ցովսէփ սրբազանին՝ հոգևորականներն և երևելիները մեծապէս խոչնդոտն են նրան, որովհետև երկիւղ են կրում, թէ նրա ընտրութիւնը ճնշմունք և հալածանք կբերուցանէ Մայր Աթոռի և հայ ազգի դէմ պարսկական կառավարութեան կողմից՝ յիշեալ սրբազանի Զուբով կոմսի արշաւանքին մասնակցելուն և Պոտեմկին իշխանի հետ ունեցած յարաբերութիւնների պատճառով. գալով Դրան, նա չէ խառնւում այդ գործին»։

Այս հանգամանքների մէջ Կ. Պոլսի հայ համայնքը Դանիէլ պատրիարքին կաթողիկոս ընտրեց, և սա արդէն պատրաստւում էր էջմիածին մեկնել, երբ Թամարա դեսպանն այդ գործին միջամուտ եղաւ։ Ինչպէս երևում է նրա կայսեր ուղղած զեկուցագրից ի $^{16}/_{28}$ մայիսի՝ նա ազդարարեց Բ. դրան, թէ Կ. Պոլսի հայերը թէև լիովին գիտեն Ցովսէփ սրբազանի առաւելութիւնները ոչ և է ուրիշ կանդիտատի առջև, բայց վախենալով Բ. Դրան հալածանքից չեն վստահանալ նրան ընտրել. այն ինչ թագաւոր կայսրին հաճելի կըլինի, եթէ հայերը կաթողիկոս ընտրեն Ցովսէփին, որ բոլոր հայերի վկայութեամբ ամենից աւագն է և արժանաւորը արքեպիսկոպոսների դասում և մանաւանդ անձամբ էլ ծանօթ է Նորին Մեծութեան։ Սրբազանի ընտրութեան արգելք եղող վտանգները մէջ տեղից բառնալու համար անհրաժեշտ կըլինէր, որ Բ. Դուռը մի նոր ընտրութիւն կարգադրէ և ինքն հայերի առջև մատնացոյց լինի Ցովսէփի վրայ, իբրև ցանկալի կանդիտատի։ Սուլթանն այդ առաջարկութիւնն ընդունելուն պէս յանձնեց դեսպանին Թագաւոր կայսրի գիտութեան հասցնել,

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան